ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի
փետրվարի 23-26-ի չորսօրյա նիստերի մասին

N ը/կ	**Հարցի անվանումը**	**Հեղինակը**	**Ծանոթություն**
1	**2**	**3**	**4**
1.	Ռազմարդյունաբերական համալիրի մասին **(երկրորդ ընթերցում, քվեարկություն)**	**ՀՀ կառավարություն** **Կ-390-22.11.2013-ՊԱ** **Ա. ՆԱԶԱՐՅԱՆ**	Քվեարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ՝ 90 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ձայներով:
2.	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին **(քվեարկություն)**	**ՀՀ կառավարություն** **Կ-705-26.01.2015-ՏՀ** **Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ** **ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ**	Նախ քվեարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 66 կողմ, 24 դեմ, 0 ձեռնպահ ձայներով, ապա քննարկվեց երկրորդ ընթերցմամբ, սակայն քվեարկություն չկազմակերպվեց:
3.	ա) «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին բ) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին,	**ՀՀ կառավարություն** **Կ-704-704^{4}-26.01.2015-ՏՏ** **Կ. ԱՐԵՅԱՆ** **ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ**	Նախ քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 77 կողմ, 0 դեմ, 11 ձեռնպահ ձայներով, ապա քննարկվեց և ընդունվեց երկրորդ

	գ) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, դ) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին, ե) «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործ-ման մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-քում լրացումներ կատարելու մասին **(քննարկման շարունակություն)**		ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 70 կողմ, 0 դեմ, 14 ձեռնպահ ձայներով:
4.	Հայաստանի Հանրապետությունում առաջացած կառավարման ճգնաժամի մասին	**<u>ՀՀ ԱԺ</u>** **<u>ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ</u>** Նաիրա Զոհրաբյան, Լևոն Զուրաբյան **Պ-644-20.10.2014**	Մերժվեց՝ 16 կողմ, 65 դեմ, 6 ձեռնպահ ձայներով:
5.	ա) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, բ) «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու	**<u>ՀՀ կառավարություն</u>** **Կ-725 - 725[2]-21.02.2015-ՏՀ** **<u>Է. ՏԱՐԱՍՅԱՆ</u>** **ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ**	Նախ քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 66 կողմ, 6 դեմ, 10 ձեռնպահ ձայներով, ապա քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 78 կողմ, 1 դեմ, 5 ձեռնպահ ձայներով:

	մասին, գ) «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին		
6.	«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին **(երկրորդ ընթերցում)**	**<u>ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ</u>** Գալուստ Սահակյան, Հայկ Բաբուխանյան, Մարգարիտ Եսայան, Կարինե Աճեմյան **Պ-463-14.03.2014,16.05.2014-ՄԻ**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 80 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ ձայներով:
7.	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի գործունեության ծրագիր	**613-30.09.2014-ՏՀ** **<u>Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ</u>**	Քննարկվեց և ընդունվեց ի գիտություն:
8.	Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2013 թվականի գործունեության մասին հաղորդում	**478-28.03.2014-ԳԿ** **<u>Գ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ</u>**	Քննարկվեց և ընդունվեց ի գիտություն:
9.	ա) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին բ) «Հարկերի մասին» Հայաստանի	**<u>ՀՀ կառավարություն</u>** **Կ-726-726[2]-23.02.2015-ՏՀ** **<u>Կ. ՃՇՄԱՐԻՏՅԱՆ</u>** **ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ**	Քննարկումը մնաց անավարտ:

	Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին գ) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին		
10.	**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ**	**ՀՀ ՆԱԽԱԳԱՀ**	
10.1.	2013 թվականի դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիր	**Ն-527-16.05.2014-ԱՀ-011/0** **Ա. ՆԱԶԱՐՅԱՆ**	ԱԺ-ը վավերացրեց համաձայնագիրը՝ 87 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

Փետրվարի 23-26-ի չորսօրյա նիստերի ընթացքում՝

- հայտարարությամբ հանդես եկան 17 պատգամավորներ,
- 4 պատգամավորներ հարցերով դիմեցին ՀՀ կառավարությանը,
- Մելիք Մանուկյանը ՀՀ ԱԺ Նախագահին ներկայացրեց ՀՀ ԱԺ-ի պատգամավորական մանդատից հրաժարվելու մասին իր դիմումը,
- Գրիգոր Մանուկյանը, Դավիթ Քոչարյանը և Մուշեղ Պետոյանը ՀՀ ԱԺ Նախագահին ներկայացրեցին «ԲՀԿ» խմբակցությունից դուրս գալու մասին իրենց դիմումները,
- ՀՀ ԱԺ-ի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Սուքիաս Ավետիսյանը, իսկ տեղակալ՝ Թևան Պողոսյանը: